Արձանագրություն N 4

«ԵՔ-ԲՄԾՁԲ-19/73» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

06.11.2019թ., Ժամը՝ 11:30

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ՝	Ա. Կիրակոսյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝	Ա. Սարգսյան, Ա. Հարությունյան, Ա. Հովհաննիսյան, Ռ. Աբրահամյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Ի. Եղիազարյան

I. <u>ՀՀ պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու մասին</u>

(Ա. Կիրակոսյան)

1. Ընդունել ի գիտություն, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի «Բագարանի բարիք» ՓԲԸ-ի կողմից ներկայացրած հայտարարությունը համարվել է իրականությանը համապատասխանող:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

1.2 «Բագարանի բարիք» ՓԲԸ-ի կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերում առկա է անհամապատասխանություն՝ նախկինում կատարված նմանատիպ պայմանագիրը գումարային արտահայտությամբ, պակաս է տվյալ ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից:
Գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 47-րդ կետով՝ որոշեց նիստը կասեցրեց՝ առաջարկելով վերոնշյալ մասնակցին երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

1.3 Համաձայն Կարգի 48-րդ կետի՝ մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար, և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, 2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

2. <u>Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին</u>

(Ա. Կիրակոսյան)

2.1 Հանձնաժողովը որոշեց՝ հանձնաժողովի նիստը հրավիրել Մասնակցի կողմից սահմանված ժամկետում անհամապատասխանությունը ներկայացնելու կամ չներկայացնելու օրվա հաջորդ աշխատանքային օրվա ժամը 11:30-ին, Երևանի քաղաքապետարանի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Արգիշտիի փողոց 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

Հանձնաժողովի Նախագահ՝		Ա. Կիրակոսյան
Անդամներ՝		Ա. Սարգսյան
		Ա. Հարությունյան
		Ա. Հովհաննիսյան
		Ռ. Աբրահամյան
Քարտուղար՝		Ի. Եղիազարյան